

ԱՂԳԱՅԻՆ

ԱՎԱՊԵԱՆ ՎՈՐԺԱՐԱՆ

Ծէքթէպի մէջգուր շփիրտանընտան պիրինին գալէմէ արմը օրտուղու շու ամբիտէքի պէնտի, գալէմ ճիհէթիլէ թէշլիգ գըլընմալարը նիլէթիլէ տէրճու պէնտան իտէրիգ:

ԽԱՌՆՈՒԱՆՔ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Տե՛ս սա անողոր ճիւղը՝ ինչպէս կ'ըսպառնայ կենաց. տես թէ որպէս կը թունաւորէ դեռաբողբոյ սրտերը. վիճակ մը որ մահ կ'ըրտաբայ և գերեզման կը գահաձլիմէ գմարդ. վա՛յ անոր որ ենթարկեալ է նորա անողոր ճիրաններուն. տես թէ ազխտութիւնը որ աստիճան կը կուրացընէ դմարդ. որ իր կորստեանն նոյն իսկ ինքը պատճառ կըլլայ, Հագարաւոր դարերէ ի վեր, կամ աւելի լաւ ըսելով, մարդիկ՝ ըստեղծուելէն մինչև յայսօր, Եփեսոս նամութեան միջ պարգևն կը վայելեն, այսինքն ԱՄՈՒՍՆՈՒԹԻԻՆ ըսուած նըռիրական վիճակը որն որ իբր օրէնք սահմանուած է:

Ամէն բան բնական օրէնքի վրէպառակ է. քննէ աշխարհին մէջ եղած ամէն իրերը, քննէ երկնքի աստղերը, արեգակը՝ լուսինը՝ և երկիրս, պիտի տեսնես որ ասոնք մէկ օրէնքի մը են. թակայեն, ինչպէս ծանրաճգութեան. որպէս զի անհուն միջոցի մը մէջ իրենց ապաստանարան մը գտնելով՝ զանազան աշխարհներ կազմակերպեն. քննէ նաև ամենաշնչին ծաղիկ մը, թափանցէ նորա գաղտնեպ, տես բնութեան ըսքանչելիքը նորա մէջ, այն մանր փոշինքը որ ծաղկին վրայ սփռուած կը տեսնես, մի կարծեր է իբր զարդ սահմանուած ըլլան. ո՛չ ո՛ւ, ասի նա. խթանամութեան գաղտնիքն ու օրէնքըն է՝ զծաղիկ վերածնանելու համար դրուած, իսկ եթէ բաժնես զայն նորա բունէն, այսինքն ծաղիկէն, անմիջապէս նա կը թառաւի և կը ջնջուի. տես բընութեան դէմ գործելու հետեանքը. ուստի ամէն բան ասոր համեմատ խորհէ, ասի ոչ թէ միայն ծաղիկին կը վերաբերի, այլ ե՛լ աստիճանաբար և հասիւր վերջապէս ամենէն բարձր աստիճանի վրայ, ահա զմարդ պիտի գտնես հոն. այն գերագոյն լէակը որ իւր նմանք ստեղծեց և տուաւ նորա զիկ մը զինքը կառավարելու համար, նաև բացաւ երկու ճամբար. «ահա, բաւա, գնա որ ճամբէն որ կուգես». ճանչցուց նա մեզ չարն ու բարին, վիսաակարն ու օգտակարը, և ինչպէս որ ըսի, տուաւ նա մեզ զօրութիւն մը, զոր խելք կը կոչենք, և այնուհետև ազատ ձգեց զմեզ, օն երթանք այն ճամբէն, որն որ բարի և օգտակար է ընդհանուրին համար. օրհնեալ ըլլայ նա, կենաց երջանկութիւններուն գերագոյնը մարդկային սեւին տուաւ. նոքա ապրիլ կուգեն լոկ սիրոյ մը համար, արդարեւ կեանք մը՝ որ գմարդ գերիվերոյ կը դասէ բոլոր մնացեալ արարածներէն, նախախնամութիւն ամուսնական վիճակ մը սահմանեց մարդուս, տեսնենք թէ մարդիկ ինչ կերպարանք տուին նորա միջոցներուն. ամեն ոք բնականաբար կուգէ իւր ազգին վրայ խօսիլ, քանի որ ես ալ Հայ եմ, միմիայն իմ ազգիս վրայ պիտի խօսիմ. այժմ կը մնայ ինձ ամուսնական վիճակի առողջաբանական մասին և աւելի լաւ ըսելով բնական մասին վրայ իմ գիտողութիւններս յայտնել:

Ո՛վ կուրանայ որ ազգ մը երթալով չի յառաջադիմեր, անշուշտ այդ պիտի ըսէք. արդ՝ նախնիք ամուսնանալու

համար բաւական կը համարէին իրենց համար ընտրել տոյն օրիորդը, որ կոյր զկուրայն հնազանդութիւն մը ընել գիտնայ, այսինքն գերութիւն, երկրորդ՝ պարկեշտութիւն ունենայ, այսինքն վանդակներու ետին նստի և բնաւ չի խօսի, որով ըստ իւրեանց պարկեշտ կարծուի. սոսկալի՛ վիճակ. բայց ինչո՞ւ կը զարմանանք, միևնոյն եղծումը հիմա ալ կը տեսնուի մեր մէջ, ահա 19րդ. դուստապայծառ դար մը, ուր թերեւս ոմանք նորա մէջ թուչիլ կերպով են, և զայն յառաջդիմութեան դար կանոնանեն, և այնպէս կը հաւատան. իսկ ես ընդհակառակն յետադիմութեան դար պիտի անուանեմ. բայց որովհետեւ իմ նպատակս միայն ամուսնութեան առողջաբանական մասին ունեցած գէշ հետեանքներուն վրայ խօսիլ էր, ուստի կը խօստանամ ուրիշ անգամ ալ նորա բարոյական մասին վրայ խօսիլ:

Արդ ինչ է Հայոց ամուսնական վիճակի արգասիքն. այո՛, անիծեալ տըգիտութիւն, լոկ իրենց ապագայից սոսկալի շիրիմներ պատրաստել, ամուսնութեան համար նախ կերթան ասկէ անկէ խորհուրդներ խնդրելու իրեն թէ նոքա բժիշկներ եղած ըլլան, գնա՛, գնա՛, ով խեղճ մարդ, ասի բժշկէն խնդրէ, և ի սէր մարդկութեան, քու կնոջդ առողջաբանական մասին անաչառ դիտողութիւններն միայն անկէ իմացիր, հասկըցիր նորա խառնածը:

Խառնածը բնելով կրմանանք մարդս արդատորող դրութիւն, մէկին միւսէն ունեցած առաւելութիւնը, կամ աւելի լաւ ըսելով՝ կենդանութիւնը ինքնին գործող դրութեանց, ինչպէս են չիղերը և արիւնք, աւանց որոց շնչող կենդանի չիկայ. այս տարբերքները այնպիսի կերպով իրարու հետ խառնուին, որով մէկը միւսէն աւելի ազդեցութիւն ունենայ. ինչպէս օրինակի համար, եթէ կազմութեան մէջ արիւնք աւելի գործէ, այն ժամանակը կըսեն թէ այս մարդը արիւնային է, այսինքն՝ ուսումնական լեզուով խառնուածը արիւնային է կըսեն. նոյնպէս ջիւղերը ոմանց մարդոց վրայ աւելի ազդեցութիւն ունին. չիմոռնանք նաև ըսելու թէ արիւնային խառնուածի տէր անձ մը ոչ թէ իւր մէջ աւելի քանակութեամբ արիւն կը պարունակէ, այլ արեանց գնտակիրներուն առաւելութիւնն է. այսինքն առնենք կաթիլ մը արիւն արիւնային խառնուածի տէր մէկէ մը և կաթիլ մ'ալ առնենք ջրային խառնուածի տէր անձէ մը, պիտի տեսնենք երկու հաւասար ծաւալով արեան կաթիլներուն մէկուն մէջ արեան գնտակիրներու առաւելութիւն մը, իսկ միւսին մէջ ոչ այնչափ, այլ աւելի ջուր պիտի գտնենք. ուստի խառնածը բնելով կրմանանք մարդկային կազմութեան այս կամ այն դրութեան միւսներէն ունեցած ազդեցութիւնը կամ առաւելութիւնը. դրութիւն բարելոյ կրմացուի գմարդ կազմող տարբերաց մարդկութիւնը, ինչպէ՛ս ոսկրային դրութիւն, արիւնային դրութիւն ջրային դրութիւն և այլն:

Նախնիք բնութիւնները նկատողութեան տեսելով շատ մի խառնուածներ կընդունէին. իսկ արդի կենսաբանք մարդկային միմիայն կենաց և կազմութեան ուղղակի գործող դրութիւնները առնելով՝ չորս տեսակ խառնուած կընդունին, որք են արիւնային խառնուած, ջրային խառնուած, մալձային խառնուած, և աւշային խառնուած. արդ. տեսնենք թէ ինչ է ա

րիւնային խառնուածի տէր մարդու մը արտաքին նշանները: Արիւնային խառնուած ունեցող կազմութեան արտաքին նշաններն են, մորթը ճերմակ և թեթեւ մը վարդագոյն, երեսը կարմիր, մաշկը շագանակագոյն, պարարտութիւնը չափաւոր, վիզը կարճ, երակը զօրաւոր և ընդարձակ, ամէն գործարան իրենց պաշտօնը կատարեալապէս կը կատարեն, դնդերային զօրութիւնը ընդարձակ է, սիրոյ հակամիտ, զգացումը զօրաւոր, իմացականութիւնը և երեւակայութիւնը ընդարձակ, կիրքը սաստիկ. այս խառնուածի մէջ ալ արիւնն է որ կը թագաւորէ: Աւշայինք խօսելու ջրային խառնուածի վրայ. ջրային խառնուածի կազմութեան նշաններն են, կազմուած չոր և նիհար, դնդերները քիչ զօրագոյն, երեսը տեղային և նիհար, և որուն վրայ պզգռիկ տպաւորութիւն մը իսկոյն կը յայտնուի, աչքեր փայլուն և պայծառ, ճակատ բարձր, շարժումները յանկարծական, կիրք ամենաառատիկ, բայց սակաւատեւ. իմացողութիւն խիստ ընդարձակ, զգայականութիւն՝ շարժուն փոփոխելի, այս խառնուածի մէջ ալ չիղերը կը յաղթահարեն:

Աւշային խառնուած Այս խառնուածի տէրմարդկանց սա նշանները կըտրուին, մաշկը կ'ըմբի կամ խարտեալ և բարակ, աչքեր կապոյտ, մորթ բարակ և ճերմակ, մաշկին դրութիւնը քիչ զօրագոյն, միսը թուր, աչքին ինչպէս նաև շրթանց կարմիր գոյնը տկարացած, ակունքները փոտելու միտեալ, այտերուն վրայ տեղ տեղ կարմրած, ձեռք և ոտք մեծ, մտաւորական յատկութիւնները քիչ և դնդերային դրութիւնը քիչ զօրաւոր, վերջապէս ամբողջ կազմութիւնը տկար, ասի աւելի տկարութիւն մ'է քան թէ առողջութեան եղանակ:

Մալձային խառնուած, որուն արտաքին նշաններն են, մորթը թուր, քիչ մ'ալ գեղնի վրայ, մաշկը սև և պինդ, աչքերը մութ գոյն և սև, դէմքը ծանր և հաստատուն, դնդերները զօրաւոր, կազմութեամբ խոշոր, բայց ոչ գէշ. ոսկրային դրութիւնը ընդարձակ, գործարանները զարգացած և իրենց պաշտօնը լաւ կատարող. բարդ մեծ, մարտողութիւնը խիստ գիւրի, իմացականութիւն և ընդունակութիւն կատարեալ, կիրք սաստիկ և տեղաւոր, հաստատութիւն, յամաբուութիւն և փառասիրութիւն, ահա մալձային խառնուածի նշաններն ու տպաւորութիւններն, այս խառնուածին մէջն ալ մալձն և լեարդն են որ գլխաւորաբար կը գործեն:

Սակայն գիտնալով որ չորս խառնուած առանձին խիստ քիչ կը պատահին մարդու մը վրայ, շատ անգամ երկուքը մէկտեղ կը պատահին որ կենաց ամենայնոց վիճակն է:

Օրինակի համար, արիւնախառն ջրային, ջրախառն աւշային, առաջինը արանց վրայ շատ կը տեսնուի, իսկ վերջինը կանանց վրայ. և պարզ խառնուածի մէջ կանանց վրայ աւշային յաճախ կը տեսնուի, իսկ մալձայինը և արիւնայինը բարանց վրայ: Ինչ որ խօսուուցաւ խառնուածներուն վրայ, ասոնք մէյմէկ առողջաբանական կանոններու ենթարկեալ են, որուն վրայ խօսելու համար նիւթս չի ներեր: Արդ տեսանք մարդկային կենաց բնական ընթացքը, տես թէ նախախնամութիւնը մարդկային սեւեր երջանիկ բնելու համար ինչ օրէնքներ սահմանած է, եթէ գիտնանք զանոնք գործածել,

և մտաւորապէս ալ խորհնք թէ, մարդուն է որ միայն կըզգայ, մարդն է որ աշխարհ կը յեղաշրջէ, նա է որ Արարչին անմահութեան վրայ պահ մը կը խորհի, նորա խառնութեան թափանցել կը յանդգնի. երկինք գրեց նորա խորհիլ, խօսիլ և ազատ գործել. փառք նորա. նա տուաւ բնական զգացումներուն վեհագոյնը մարդուս, այն է Սիրելի և Գանի երջանիկ ենք, երբ ամուսնութեան մէջ բնական օրէնքները նըկատողութեան առնումը. բայց ոչ, ցաւօք սրտի կըսեմ, բնական օրինաց դէմ կը գործենք. իբրև թէ մէկ մէկ ինքնագոյ զօրութիւններ եղած ըլլայինք, չենք ուղեր յարգել այն օրէնքը որ բընութիւնը մեզ համար սահմանած է: Անյարմար ամուսնութիւն, ինչպէս քիչ մը վերը խօսեցայ անյարմար ամուսնութեան մէկ վիսաակար ընթացքին վրայ, այսինքն փոխանակ բժշկին դիմելու ուրիշներուն կը դիմեն, բնական կատողութեան չեն առնուր երկու ամուսններու խառնուածներն. օրինակի համար, եթէ երկու ջրային խառնուածի տէր անձինք իրարու հետ ամուսնանան, անշուշտ երկուքն խիստ զօրաւոր ջրային մը յառաջ պիտի գայ, այս խառնուածի մէջ ալ յաճախ ամեն տեսակ ջրային հիւանդութիւններ կը պատահին. արիւնային խառնուածի տէր մէկը եթէ արիւնային խառնուած ունեցող օրիորդի մը հետ ամուսնանայ, բնականաբար անոնցմէ յառաջ եկած զաւակներն ալ ժառանգաբար չափազանց արիւնային խառնուածի տէր պիտի ըլլան, որք որեքանց հիւանդութեան ենթակայ պիտի ըլլան. նոյնպէս եթէ երկու մալձայինք ամուսնանան, չափազանց մալձային մը յառաջ կուգայ որ այս խառնուածի մէջ ալ լեարդի հիւանդութիւն նաև աղիքները հիւանդութիւն կը պատահի. այս երեք խառնուածի տէր անձանց համար այնչափ վիսաակար չէ, եթէ երկու խառնուած տեղի ունենայ, որովհետև կրնանք առողջական միջոցներով վիսաանելու առաջին ամենը, բայց եթէ ամենաողորմելի երկու աւշայիններ ամուսնանան, ահա հաւաստիկ դժբաղդութեան տիպարը:

Ահա հոս ամէն բան կը կասի. ոչ առողջաբանական միջոց և ոչ ալ բժիշկ կրնայ նոյս դարման մը տալիլ. ամեն ճիգ ունիւ. արմատ մը՝ որ եթէ իր մէջ թոյն պարունակելու ըլլայ, ինչ կը յուսաք նորա բունէն, նորա ոստերէն, և վերջապէս նորա պտուղէն, թոյն մը որ արմատէն կակսի, թոյն մը որ սրտի խորքը կը թափանցէ, թոյն մը որ խեղճ մանկուոյն մարմինը կը բաղդուրէ, ահա ասիկ թշուառ արարածներ, ծնողացմէ ժառանգաբար իւրեանց զաւակաց և սերնդեան պիտի անցնի. զգաւարանայ կողմանէ աղիքի ցաւ, հարբուխ, ականջի բորբոքում, մարսողութեան գործարաններու կողմանէ՝ փոփոքի և աղեաց բորբոքումն, շնչառութեան գործարանայ կողմանէ՝ հազ և կուրծքի զանազան հիւանդութիւններ, վերջապէս թոքախտը և խոլը որ կենաց աղբիւրը կը ցամքեցընէ: Որ և է վիճակ մը ժառանգաբար զաւակաց վրայ անցնելուն տարակոյս չիկայ. մարդ մը որ ցեղէն որ ըլլայ, միշտ իւր նմանը յառաջ կը բերէ, կովկասեաններուն սպիտակ ամուսները միշտ սպիտակ մը սևելու սև մը կը յարուցանեն:

Աւշային խառնուածի դեռ մնացեալ մանրամասն հիւանդութիւնները կրնան խորհիլ անոնք որոնք լաւ կը հասկնան

Գալաթիստա իննչէմպիւն բաղարընտա
Ն. 29 Իբսի խանընոտ ա